ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-20-10/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 09.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն.Յոլչյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ա-2» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ոսկանյանի, ով գործում է «Ա-2» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **06.12.2019թ.** կնքված N ԳՀԾՁԲ-20-10/2-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանասական միջոցները նախատեսվել են 26.12.2019թ. ՀՀ կառավարության N 1919-Ն որոշմամբ և ՀՀ պաշտպանության նախարարի 12.02.2020թ. Ծանուցում N 2-ՊՆ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով **հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և Հավելված N 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան **հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ** (այսուհետ՝ Ծառայություն)՝ Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է **900 000 (ինը հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ա-2» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք.Երևան, Շրջանային 2/2
ՀՀ ՖՆ գործառնական գանձարան	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 9000111440	Հ/Հ 24701000292500000
ՀՎՀՀ 02522152	ՀՎՀՀ 01804822
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	Տնօրեն
Ն.ՅՈԼՉՅԱՆ	Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-10/2-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության									
Հ/հ	CPV	անվանումը	Առանձին տեսակների անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավորի նախահաշվային գինը/ՀՀ դրամ Բազմասակագնային հաշվիչ ՍՏԵՄ-3Վ	Միավորի նախահաշվային գինը/ՀՀ դրամ Բազմասակագնային հաշվիչ ՍՏԵՄ-3Վ	ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	մատուցման ժամկետը
1	50311110/503	Հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություն	Առաջին կարգի նորոգում	Առաջին կարգի նորոգում՝ հաշվիչի որևիցե էլեկտրոնային կամ մեխանիկական դետալի փոխարինում, կարգաբերում, ստուգաչափում, կապարակնքում և ստուգաչափման արդյունքների ակտի տրամադրում:	հատ	7,020.0	3,540.0	900 000	Ծառայության գնումը կիրականացվի ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչության կողմից տրվող հայտերի հիման վրա՝ մինչև 15.12.2020թ.
			Երկրորդ կարգի նորոգում	Երկրորդ կարգի նորոգում՝ հաշվիչի էլեկտրոնային կամ մեխանիկական դետալների կոմպլեկտ փոխարինում, կարգաբերում, ստուգաչափում, կապարակնքում և ստուգաչափման արդյունքների ակտի տրամադրում:	հատ	14,100.0	7,080.0		
			Երրորդ կարգի նորոգում	Երրորդ կարգի նորոգում՝ հաշվիչի էլեկտրոնային և մեխանիկական դետալների կոմպլեկտ փոխարինում, կարգաբերում, ստուգաչափում, կապարակնքում և ստուգաչափման արդյունքների ակտի տրամադրում:	հատ	21,060.0	10,626.0		
			Լիթումային մարտկոցների փոխարինում	Լիթումային մարտկոցների փոխարինում, կարգաբերում, ստուգաչափում, կապարակնքում և ստուգաչափման արդյունքների ակտի տրամադրում:	հատ	1,990.0	1,990.0		
						44,170.0	23,236.0		
	Ընդամենը					67,406.0			

1. Գնման պլանավորված նախահաշվային առավելագույն գինը կազմում է **900 000 (ինը հարյուր հազար)** ՀՀ դրամ:
2. Հաշվիչների տեղափոխումը զորամասից նորոգող կազմակերպություն և հետ զորամաս կատարվում է ՀՀ ՊՆ միջոցներով և հաշվին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

...ՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ա-2» ՍՊԸ
Տնօրեն

Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀՇՁԲ-20-10/2-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայությունների											
Հ/h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20-ը
1	50311110/503	Հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություն	900 000	900 000	900 000	900 000	900 000	900 000	900 000	900 000	900 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Ն.ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ա-2» ՍՊԸ
Տնօրեն

Ա.ՈՍԿԱՆՅԱՆ